



*[Handwritten signature]*

Հաստատված է  
ԵՊՀ գիտական խորհրդի  
2017թ. մարտի 2-ի թիվ 5 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ,  
Ա. Հ. Սիմոնյան  
«2» մարտի 2017թ.

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**  
**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ**  
**ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**  
**(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1. Միջազգային համագործակցության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) կառուցվածքային ստորաբաժանում է:
- 2. Վարչությունը զործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ-ի և սույն կանոնադրության հիման վրա:
- 3. Վարչությունը սահմանված կարգով կարող է ունենալ դրոշմակնիք՝ (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), պաշտոնաթուղթ (բլանկ) և անհատականացման այլ միջոցներ:

**II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

- 4. Վարչության խնդիրներն են.
  - 4.1. ԵՊՀ միջազգայնացման նպատակով օտարերկրյա բուհերի, գիտակրթական կենտրոնների, դիվանագիտական ներկայացուցչությունների, պետական մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության խթանումը, համագործակցության պայմանագրերի նախագծերի, աշխատանքային պլանների կազմումը և իրականացման նկատմամբ վերահսկողությունը, պաշտոնական փաստաթղթերի փոխանակումը և նամակագրության վարումը:
  - 4.2. Օտարերկրյա ուսանողների հավաքագրումը, նրանց անձնական գործերի կազմումն ու հաշվառումը, նրանց ընդունելության գործընթացի կազմակերպումը, ուսումնառության ընթացքում օտարերկրյա ուսանողների վերաբերյալ հրամանների նախագծերի պատրաստումը:
  - 4.3. ԵՊՀ դասախոսներին և ուսանողներին միջազգային գիտական (դրամաշնորհային) ծրագրերում (ներառյալ՝ փոխանակման ծրագրերում) ներգրավման աշխատանքների կազմակերպումը,

4.4. միջազգային սեմինարների, աշխատանքային հանդիպումների, գիտաժողովների և գիտակրթական ցուցահանդեսների կազմակերպումն ու համակարգումը:

4.5. ԵՊՀ ժամանող օտարերկրյա մասնագետների, հյուրերի և պատվիրակությունների հրավերների, անհրաժեշտ փաստաթղթերի և մուտքի արտոնագրերի ձևակերպումը (ըստ անհրաժեշտության) և նրանց ընդունելության կազմակերպումը, նրանց կեցության քարտերի երկարաձգման փաստաթղթերի պատրաստումը, նրանց հաշվառման քարտարանի ստեղծումը և տվյալների մշակումը, օտարերկրյա քաղաքացի հանդիսացող աշխատողների անձնական գործերի վարումը:

4.6. ԵՊՀ կանոնադրական նպատակներից բխող միջոցառումների մասնակցելու նպատակով արտասահման մեկնող աշխատողների գործուղումների ձևակերպումը և արտասահման մեկնող սովորողների հրամանագրումը:

4.7. ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին միջազգային գիտակրթական ծրագրերի, դրամաշնորհների, բուհերի կողմից առաջարկվող գիտակրթական և ուսումնական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը, դրամաշնորհային ծրագրերի փաստաթղթերի պատրաստումը և դրանց կատարման ընթացքի համակարգումը:

4.8. ԵՊՀ-ում դասավանդած, ուսումնառություն կամ ստաժավորում անցած օտարերկրյա քաղաքացիներին ակադեմիական տեղեկանքների, ինչպես նաև նրանց վերաբերյալ ստացված պաշտոնական հարցմամբ պահանջվող այլ տեղեկատվության տրամադրումը, փաստաթղթերի թարգմանությունն ու պաշտոնական վավերացումը:

4.9. Սփյուռքի հայկական բարեգործական կազմակերպությունների կողմից ԵՊՀ բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ուսանողներին հատկացվող խրախուսական միանվագ կրթաթոշակների բաշխումն ու դրա վերաբերյալ համապատասխան հաշվետվությունների ներկայացումը:

4.10. հրատարակչական աշխատանքների իրականացումը:

4.11. Վարչության գործունեությունից բխող այլ խնդիրների իրականացումը:

### **III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

5. Վարչության անմիջական համակարգումն իրականացնում է ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորը:

6. Վարչության կառավարումն իրականացնում է վարչության պետը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ռեկտորը:

7. Վարչության պետը՝

7.1. կազմակերպում և վերահսկում է վարչության գործունեությունը, ապահովում է վարչության հիմնական գործառույթների իրականացումը և լուծում դրանից բխող հիմնախնդիրները,

7.2. համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ է տալիս վարչության աշխատողներին,

7.3. սահմանված կարգով տնօրինում է վարչության ֆինանսական միջոցները,

7.4. ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ԵՊՀ գիտական խորհրդին,

7.5. ստորագրում է վարչության կողմից պատրաստվող փաստաթղթերը,

7.6. ներկայացնում է վարչությունը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, վարչության անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում,

7.7. պատասխանատվություն է կրում վարչության առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար,

7.8. լուծում է վարչության կանոնադրությունից բխող և վարչության գործունեության հետ կապված այլ հարցեր:

8. Վարչության կառուցվածքը ներկայացված է սույն կանոնադրության հավելվածում:

9. Վարչությունը բաղկացած է բաժիններից, որոնց ղեկավարներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ռեկտորը: Բաժինների ղեկավարների իրավասությունը և պարտականությունները սահմանվում են պաշտոնի անձնագրերով և/կամ վարչության պետի հանձնարարականներով:

#### **IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

10. Վարչության վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

11. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ-ի գիտական խորհրդի կողմից՝ ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

#### **ՀԱՎԵԼՎԱԾ**

##### **ԵՊՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության կազմում ներառված են հետևյալ բաժինները.

1. Միջազգային կապերի բաժին,
2. Օտարերկրյա սովորողների կրթության կազմակերպման բաժին,
3. Դրամաշնորհների համակարգման բաժին: